ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

20.01.2016թ.
266-ի 6

ՀՀ գլխավոր հարկադիր կատարող
պարոն Միհրան Պողոսյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Պողոսյան,

2015 թ.-ի նոյեմբերի 10-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել է Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը՝ խնդրելով հայտնել, թե.

1. Որքա՞ն են կազմել 2014-2015 թվականների ընթացքում ԴԱՀԿ-ի կողմից հարուցված կատարողական վարույթներով կատարողական ծախսերը,
2. 2014-2015 թվականներին որքա՞ն գումար է բռնագանձվել հօգուտ պետ. բյուջեի, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց օգտին,
3. 2014-2015 թվականներին որքա՞ն վարույթ է ավարտվել գումարը բռնագանձելու անհնարինության փաստով և որքա՞ն է կազմում այդ գումարը,
4. 2014 և 2015 թվականների ընթացքում, ամեն տարվա կտրվածքով, որքա՞ն գումար է կառավարությունը հատկացրել ԴԱՀԿ ծառայությանը:

ԴԱՀԿ-ից ստացել ենք 18.11.2015թ. թվագրված պատասխան գրությունը, որով տրամադրվել են հարցման 2, 3 եւ 4-րդ հարցերի պատասխանները: Շնորհակալ ենք տրամադրված տեղեկության համար, սակայն պատասխան գրությունում բացակայում է հարցման 1-ին հարցի պատասխանը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե որքա՞ն են կազմել 2014-2015 թվականների ընթացքում ԴԱՀԿ-ի կողմից հարուցված կատարողական վարույթներով կատարողական ծախսերը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ ադմինիստրատոր Անժելա Նորիկյան